

## ՏԻՒՊԷԻԹՔ

### Ա

Քո սիրուդ, ո՛վ Կոյս սըրբազնեալ,  
 Զի զիմանար Հէջ մէկ մարդ, մարդ .  
 Աննըման ես յոյժ գեղեցիկ,  
 Հոտով գունով կարմիր վարդ, վարդ .  
 Ինձ ախով կարօտով լըցիր,  
 Քեզ սիրելոյ զարթեցուցիր .  
 Թագ սըսակ փառքեր ցըցուցիր,  
 Ու պայծառ լոյս անճառ զարդ, զարդ .  
 Ե՛մ դու իմս ես՝ ինձի չըսիր .  
 Տենչալուդ եմ ծառայ եէսիր .  
 Ղունկիանսին թէ՛ղ թէ՛ղ հասիր .  
 Կեանքէն կ'ըլլայ իսկոյն արդ, արդ :

### Բ

Տիրուհի Կոյս, դու ես, դու ես  
 Պայծառ աստղը առաւօտեան .  
 Խաւարին վերջ, լուսոյ ըսկիզբ,  
 Անպատում հըրաշք գեղազան :  
 Ողորմութեամբդ ծովացար,  
 Անուշ հոտով տարածուեցար .  
 Բարբալտութեան մէջ բացուեցար,  
 Շընչական վարդ, խօսուն չուշան :  
 Կը հըրճուիս հետ ծաղկըներուն,  
 Զորս կողմի առին կուսանք սիրուն .  
 Ե՛մ չըսեմ մի ան աչքերուն  
 Հազար երնէկ՝ որ քեզ տեսան :  
 Ինչո՞ւ ես ընկեր եմ նըկուն,  
 Սէրդ սիրարս կապեր է բուն .  
 Պայծառ դէմքիդ քաղցըր տեսուն՝  
 Տէ՛ էրա Ղունկիանսն արժան :

### Գ

Ըսի՛ . Լըսէ՛, զըջիւոյ փառաց .  
 Բնաց, թէ Ի՛նչ, Ի՛նչ կը խընդրես :

Ըսի. Քու սուրբ տեսութիւնը.  
Ըսաց, թէ Քեզ կ'երեւամ ես:  
Ըսի. Խօսքէդ զըւարճացայ.  
Ըսաց. Ունիս սէր, հասկըցայ:  
Ըսի. Գիտցար որ վառուեցայ.  
Ըսաց. Թէզօք գիտ կը գըտնես:  
Ըսի. Իմ' սապրես կըտրեցաւ.  
Ըսաց. Օրերդ ալ լըցուեցաւ:  
Ըսի, թէ Երկինք բացուեցաւ.  
Ըսաց. Պիտոր գաս ներս մըտնես:  
Ըսի. Յաղճալի ես նոճ ծառ.  
Ըսաց. Եղիբ միշտ սիրով վառ:  
Ըսի. Տէ, եկ' Ղուկիկանոսն ան.  
Ըսաց. Քեզ լաւ պատրաստեր ես:

Դ

Ըսի. Կ'ողբամ, կ'աղերսեմ, Կոյս.  
Ըսաց. Տէրտըդ, ցաւըդ ի՞նչ է:  
Ըսի. Որք եմ աշխարհի մէջ.  
Ըսաց. Զիս քեզի մայր ճանչէ:  
Ըսի. Յոյսըս այլ ո՛ւմ մընաց.  
Ըսաց. Կը խըղճամ ցաւալեաց:  
Ըսի. Զարհուրիմ կը չարեաց.  
Ըսաց. Ինձ օգնութիւն կ'անչէ:  
Ըսի. Գըթութեամբ նայէ մեզ.  
Ըսաց. Եղիբ խոնարհ ու հեզ:  
Ըսի. Երգով գովեմ կը քեզ.  
Ըսաց. Քաղցըր, անուշ հընչէ:  
Ըսի. Ղուկիկանոսն ան քու քով.  
Ըսաց. Եկուր բարի վարքով:  
Ըսի. Խիստ յոգնած եմ հոգով.  
Ըսաց. Մէջ գըրախտին հանգչէ:

Ե

Կերպ կերպ խաչեր, միշտ, նեղութիւնք,  
Կարիք չի հասնիր կըրելու.  
Հէմ ծերացայ, թափէ ընկայ.  
Ի՞նչ յոյս մընաց ակ ապրելու:  
Մայր աղքատաց, ո՛վ թագուհի,  
Իմ սիրտս է միշտ 'ի մէջ ահի.  
Հիւանդութիւն մը պատահի,  
Զի գըտուիբ մարդ մը ջուր տալու:  
Սիրով նայէ, խըղճա՛մ մէկ հեզ.  
Աշխարհ եղեր է ինձի նեզ.  
Կը պըտըտեմ գեղէ 'ի գեղ,  
Տեղ մը չունիմ բընակելու:

Անձըս խիստ կը տանջի տապի,  
Ո՛վ նազելիդ, ինձի հըպի.  
Ղունկիանոսը շատ կը շտապի  
Յարքայութիւն շուտ հասնելու:

Ձ

Հըրեշտակաց թագուհին՝ թէ  
Սուրբ ձեռքը իմ վըրաս դընէ,  
Ուրախ կ'ըլլամ ամէն կերպիւ,  
Ձիս սէլամէթը կը հանէ:  
Ան կողմէն հողմը յիս գալուն՝  
Ղը հըրգեհէ անշէջ սիրուն.  
Մէզէթն ընկայ, բէհ զարնելուն՝  
Աւելցընէ ինքը գընէ:  
Յանկարծ յարքայութիւն մըտնամ,  
Անտեղ իմ սիրելիս գըտնամ,  
Ի՛նչպէս իրան զուրպան չըլլամ,  
Երբ որ աս շընորհքը անէ:  
Ղունկիանոսն եմ, սիրոյ նըշան,  
Վէշըքեր ունիմ տասը քըսան.  
Ես ժուռ կու գամ խնդճ փէրուշան,  
Քանի աս սէրն իմ քով կայ նէ:

Է

Ա՛խ, նազելի Աստուածածին,  
Քեզ կը փընտռեմ սաստիկ սիրով.  
Այս իմ սէրս յայտնել անկար է  
Լճուով, թըղթով, գըրչով, գըրով:  
Գոնեա Աստուած այսպէս գըթար,  
Լըսէր ձայնս, խընդիբբըս տար.  
Ըսպանէին գիս քեզ համար,  
Հազար կերպ կերպ տանջանքներով:  
Հըրեշտակք չորս կողմըս առնէին,  
Փեհերուն վըրայ բըռնէին,  
Մաքրաքարդ սըրբոց խառնէին,  
Մեծ խընդութեամբ, հըրճմամբ, պարով:  
Երնէկ կ'ըլլար Ղունկիանոսին,  
Այս կերպ հասնէր Մօրն Յիսուսին.  
Քաշած կարօտըս սուրբ Կուսին՝  
Կիանքըս անցուց ահիղարով:

Ը

Տեսուդ կարօտովը, Մայր սուրբ,  
Կ'էրիմ ու կը վառիմ անբոց.  
Սիրուդ երկսայրին բացեր է  
Սըրտիս վըրայ անհամար խոց:

Պանդըխտութիւնըս երկընցաւ,  
 Ստատաւորըս հեղեղ դարձաւ.  
 Քեզի համար զըրցընցաւ  
 Մըխիթարիչ վըշտացելոց:  
 Ե՛րբ դիս պիտոր մըխիթարես,  
 Այլ չեմ կըրնայ դիմանար ես.  
 Խիստ ողորմած գըթած մայր ես,  
 Շուտ կը հասնիս դու նեզելոց:  
 Ղունկիանոսին եկուր հասիբ,  
 Փըրկարար ձեռքդ վըրան դիբ.  
 Էրա իրեն քեզ որդեգիր,  
 Անցուր պայծառ կարգը սըրբոց:

Թ

Մոլորելոց ճանապարհ էս,  
 Խաւարիւղոց լոյս, Մարիամ.  
 Մըխիթարիչ ես նեզելոց,  
 Մեղաւորաց յոյս, Մարիամ:  
 Գովքդ կ'երգեմ, շարական, տաղ.  
 Խիստ սիրուն ես տեսլեամբ չըքնաղ.  
 Փակեալ պարտէզ ու կընքեալ պաղ,  
 Զուարթածաղիկ բոյս, Մարիամ:  
 Եթէ խըղճաս, ինձի մօտիս,  
 Մէհլէմ կ'ըլլաս ամէն տէրտիտ.  
 Ուրախութիւն տըրտմեալ սըրտիս  
 Ես դու, ամբի՛ծ կոյս Մարիամ:  
 Ղունկիանոսը գըլորեցաւ  
 Անկըրելի ցաւէ 'ի ցաւ,  
 Դու ես փրկութիւնը՝ գիտցաւ,  
 Զեռք տուր անկելոյս, Մարիամ:

Ժ

Բոլոր աշխարհի ես ցընծում,  
 Դու, Մարիամ, մայր Աստուծոյ.  
 Պայծառ արեւ մը ծագեցար,  
 Լոյսըդ արփի ծաւալելոյ:  
 Քեզնով կըրնանք, ո՛վ յոյսըդ մեր,  
 Գործել առաքինութիւններ.  
 Զօրացու՝ վարդեր, ծաղկըներ  
 Սըրտիս պաղչան բուսցընելոյ:  
 Հոգիս կը հեծէ, հառաչէ,  
 Կարօտդ ինձի խիստ մեծ խաչ է.  
 Կեանքըս զուրպան քեզի՝ քիչ է,  
 Արժանի ես հազար պատուոյ:  
 Ղունկիանոսն եմ, չատ կը բաղձամ՝  
 Տեսնայի գէմքդ միանգամ:

Արդեօք պիտոր արժան ըլլամ  
Հոգիս ձեռքդ տանդեղոյ :

ԺԱ.

Ողորմէ, Մայր սուրբ, կը սպասեմ,  
Իմ կարօտըս լըցընելու .

Կամք ընես նէ՝ դոժուար չէ քեզ  
Քիտուսիս հետ տեսցընելու :

Դու ես ծաղկալի բուրաստան,  
Սըրբեր, կուսանք հետ քեզ ցընծան .

Եղեր է ինձ բանտ ու զընտան,  
Այս աշխարհս է քամահրելու :

Սիրտըս խոցեց սիրուդ նետը,  
Վազեցուց աչքերուս գետը .

Երբ զըտնամ քեզ Փըրկչիս հետը՝  
Այլ խօսք մը չունիմ ըսելու :

Փափաքս իսկոյն կը կատարուի .  
Տես, ի՞նչ խընտում ինձ կը տըրուի .

Ղուենկիանոսը վառուի կ'երուի՝  
Մէկ անգամ ձէնըդ լըսելու :

ԺԲ.

Սուրբ Դոյս, տէրտովդ եմ խօթացած,  
Ձիս բըժըկէ, առողջացուր .

Մըխիթարիչ ես նեղելոց,  
Աս տըրտմեալըս ուրախացուր :

Թաչ պըզտըկուց քեզ սիրեցի,  
Դու ցանկալիդ, իմ քով կեցի .

Գոնեա հըրաչքով մօտեցի,  
Սըրտիս նեղութիւնը վըրցուր :

Մի՛ նայիր իմ անարգ վարքին .  
Էարօտ եմ քո առատ տուրքին .

Մէհլէմ մը դիր սիրուդ վէրքին .  
Ինձի՛ յանկարծ քեզի գըտցուր :

Հէրիք է քո ճամբադ աշեմ,  
Կարօտութիւնըդ ալ քաշեմ .

Ի՛նչ ցաւ կը զգամ՝ երբ քեզ կ'յիշեմ,  
Եկուր Ղուենկիանոսին հարցուր :

ԺԳ.

Ձեւ մի՛ գիտեր, անըմանիդ  
Սիրահար եմ ես բընակաւ .

Քի՛, դու մէկ ինձ երևայիր,  
Տեսիլքով մը առանձնական :

Սէրըդ սիրտըս թափեր ես հուր,  
Ձեմ մոռնայ քեզ երթամ նէ ուր .

Կոննա քաղցրը ձայն մը ինձ տուր,

Լամ, յօրինիմ երգ ողբական:

Մըխիթարում տսով պարի,

Զիւնրի տէխիւէս՝ կ'անցնի տարի,

Պաղի պաղի քովըս՝ արի,

Ճիւի մի թողուր անօգնական:

Քեզ կարգալու լեզուս վարժ է.

Կեանքս տամ մէկ տեսուգ՝ կ'արժէ.

Ղուկիրանոսին գութըդ շարժէ,

Յանկայի Մայր իմ սիրական:

### ԺԴ

Քաղցրը աչքով նայէ ինձի,

Աղէթորով Մայր ցանկայի.

Կարօտովըդ, վառ սիրովըդ

Հիւանդ եմ, սիրտըս եարալի:

Դու ես անգին ջէռաւհիւր, գանձ,

Պայծառափայլ, յոյժ գերապանծ.

Ունիմ յաւէտ բարի նախանձ,

Սիրել, քեզ ըլլալ սիրելի:

Ղուկիրանոսին ցաւը գիտես,

Սիրտը մէկ բաց, աչքովք ալ տես.

Պոյիտ ղուրպան հայրան եմ ես.

Քեզ կ'ուզեմ կեանքէս աւելի:

## ՂԷԼԷՆՏԵՐԻՔ

### Ա

Միտքըս քեզ հետ է, խելքըս առեր ես գու Սիրունըդ,  
Զի հըրեշտակըք կ'ափշիցընէ գեղեցկութիւնըդ:

Դող կ'ելլէ սիրտըս, ցանկայի Կոյս, ուչքըս կը վերնայ  
Իսկոյն՝ լըսելուս հըրաշալի քաղցըր անունըդ:

Կարօտութեանըդ ողբ ու լացով՝ հալեր մաշեր եմ.

Ե՛կ մըխիթարէ, կըտրէ լացըս, գու Մայր Տէրունըդ:

Սաստկագոյն սէրըդ Ղուկիրանոսին փերուշան էրաւ,

Պանդուխտ ժուռ կու գայ, առ ընդունէ քո պայծառ տունըդ:

### Բ

Վերջին վախճանիս ինձի հասուր գու առնող մուրատ,  
Հըրեշտակաց ես ցանկալի խիստ, անբիծ, անարատ:

Անունդ է քաղցըր, Մարիամ կոյս սուրբ, ինքըդ հըրաշք.  
Երկինք, յերկրի մէջ՝ չես գըտնըւիր, աննըման, մէկ հատ:

Յոյսըս գընելով սիրուդ վըրայ համարձակ կ'ուզեմ,  
Տեսրդդ վայելել, ուրախանալ ես քեզի հետ զատ:  
Փափաքը լըցուր Ղունկիանոսին, քեզնով խընտացուր -  
իզըը կատարէ, որդեսէր ես, գըթութիւնդ առատ:

Գ

Չեմ կըրնայ առներ իմ կարօտըս գեղադարդ կուսէն,  
Մարդ չիտէ տէրտըս, բըռնկեը եմ, կ'այրիմ կը ներսէն:  
Կարծիք չի մընայ՝ այս ցաւերով կեանքէս ըլլալու,  
Եթէ չըհասնի ինձ օգնութիւն գըթած Յիսուսէն:  
Սըրտիս բաղձանքը՝ տեսածիս պէս՝ իսկոյն կը լըցուի.  
Ըլայ մի պիտոր պայծառանամ երեսին լուսէն:  
Մէկ օր կ'ողորմի, կ'առնէ քովը, հէչ կը թողուն խեղճ -  
Հէլպէթ ծառան է, կ'անցընի մի Ղունկիանոսէն:

Դ

Սըրբուհիէդ զատ՝ ուրիշ մէկի մ'սիրտ չեմ տաք, սիրերս  
Ոտքերուդ տակը՝ երեսներս եմ կոխելու գըրերս:  
Հէչ մի հընար է մէկ սաՀաթ մը նազելիդ մոռնալ,  
Սիրուդ կըրակը սէրն աշխարհէս չի կըրնայ մարերս:  
Ո'վ կըրնայ բաժնել ինձի քեզնէն. սուրը թէ մահը.  
Մեռցընեն ալ նէ՝ մեծ ցընծում է, հէչ զէմ չեմ կըրերս:  
Այս իմ նըւէրըս առ ընդունէ՝ անարդ ալ է նէ,  
Արդ Ղունկիանոսը քեզի ծառայ ընծայ եմ բերերս:

Ե

Սուրբ կոյս Մարիամ, իմ խոցերըս բաց մէկ նայէ դու.  
Գութ չարժէ վըրաս, քաջ Լօխմանդդ, եկ բըժըղկելու:  
Ոտքէս գըլուխըս սաղ տեղ չունիմ, լըցուած եմ վիրօք -  
Ողորմութենէդ, բըժիշկ ճարտար, ըսպեղանի տու:  
Դու առողջացու, դու ողջացու թիրուդ դեղերով:  
Մի՛ կարօտ էներ վիրաբուժից ինձ ձեռք դարնելու:  
Աղբատ Ղաղարին տէրտերը ինձ տըրուեցաւ ճէպայ,  
Գըտցուր ուրեմըն Ղունկիանոսը գոգն Սքրահամու:

Զ

Ըռունտ Մարիամ, պայծառ դէմքիդ եղեր եմ ապուշ,  
Դու ինքըդ հըրաշք, մարգարտալի մագիրդ է բըժբուշ:  
Գեղեցկութիւնըդ մէկ տեսնելու՝ կեանքըս տամ՝ քիչ է.  
Գին մի կը հասնի, Փարէզ, Հըռոմ, Տիէրպէթիր, Մուշ:  
Դու լաւ գիտեա՝ որ ես առանց քեզ՝ չեմ կըրնայ ըլլայ -  
Գըթութիւն արա, մի երեւար ծառայիդ ուշ ուշ:  
Վըտանգներէ ալ ինձ տըկարըս պահէ պահպանէ.  
Ղունկիանոսը առ շընորհիդ մէջ, լեր հոգւոյն ըզգուշ:

Է

Շատ պայծառ ես, Կոյս, որպէս արփի, ըռէնկով կակաչ.  
Քեզ կը վայելէ գեղապըճնիլ մօռ, կարմիր, կանաչ,  
Անկըրելի է քո կարօտըդ, սաստկագոյն սէրըդ,  
Ասկից աւելի ալ կ'ըլլայ մի ինձ ծանրագոյն խաչ,  
Մըխիթարիչ ես սրգաւորաց, ամէն ցաւալեաց,  
Տէ՛ գիս ըսփոփէ, ողիխորով, արագահաս քաջ,  
Գութ չարժէ վըրան, խիստ կարօտ է քո օգնութեանըդ,  
Նըւաստ ծառադ է Ղունկիանոսը, ոչ է անճանաչ:

Ը

Թող բացուի երկինք, մօր Յիսուսին՝ որ սիրտ եմ տըւեր,  
Մէկ երեւոյ ինձ, խիստ կը սիրեմ, բոլոր կեանքէս վեր:  
Ի՛նչպէս չըփընտռեմ, Թագուհիդ իմ հըզօր Մարիամ,  
Դու ես մի միայն փառք ու պարծանք յոյս ու մօլանիս մեր:  
Աղաչանքդ է քո անդառնալի միածին Որդուդ,  
Ուրեմն, սուրբ Կոյս, մեղաւորիս դու բարեխօս լեր:  
Ո՛վ ցանկալիդ իմ, քո անուանըդ Թող արուն Թափեն  
Օրը հազար հատ ինձի նըման Ղունկիանոսներ:

Թ

Այլ չեմ դիմանար, Կոյս գեղեցիկ, սիրուդ կըրակին,  
Զորս կողմըս առին, տեն մէկ անգամ՝ ցաւոց ըսնակին:  
Կարծես տէրաք ամէն մէկըդմէկու հըրամցուցեր են,  
Համախումբ հեղան զեղան 'ի մէջ սըրտիս սենեակին:  
Թագուհիդ յերկնից մէկ երեւաւ անճառ փառքովդդ,  
Լըցուի կարօտըս, կեանքըս կու տամ աս կերպ հըրաշքին:  
Խըղճա խըղճալուս, հէրիք է լայ Ղունկիանոս ծառադ,  
Զի կըրնայ ըսնող ցաւալի իւր սըրտիկը մէկին:

Ժ

Մայր խընամատար, ինձիմենէ մի ըլլար հեռի,  
Բարի սըտդովդդ նըմաներ ես դու խընկի ծառի:  
Ուրախութիւնով խիստ լըցուած եմ, կը ճըխայ անձըս,  
Սիրուդ ճըրագը իմ սըրտիս մէջ անշէջ կը վառի:  
Գեղեցիկութեանդ մէկ մոյլէի, ըլլայ մի պիտօր,  
Կարօտովդդ, ա՛խ, կ'էրիմ կ'այրիմ, որպէս Թիթեռի:  
Դու Ղունկիանոսին յոյս մը տուր որ խընտայ պարծենայ՝  
Թէ Թագուհիէս՝ արքայութեան խոստմունքը առի:

Կը շարունակուի: